

ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ՃԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՅ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԵՋ ԻՐԱՆԻ ՀԻՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ ՀՐԹԻՌԱԿՈՍՄԱՆ ՀԵՏԵԱՆՔՈՎ ԻՆԿԱՏ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ հեռաձայնային կապ հաստատելով Իրանի Նախագահ Իպրահիմ Ռայիսիի հետ ցաւակցութիւն յայտնեց անոր՝ Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսութեան վրայ իսրայէլեան վայրագ յարձակումին հետեւանքով ինկած իրանցի զինուորական խորհրդականներու Նահատակութեան համար:



Նախագահը իր եւ Սուրիոյ ժողովուրդին անուսով Նահատակներու պարագաներուն եւ Իրանի սիրելի ժողովուրդին կարեկցանք ու զօրակցութիւն յայտնեց, շեշտելով որ սիրնիստական այս կազմակերպութեան բնակիչներով հոծ շրջանի մը մէջ դիւանագիտական առաքելութեան կերտող իր թիմակիցները զարմանալի չի թուիր, որովհետեւ այս կազմակերպութիւնը հիմնուած է սպանութիւններու, արիւնահեղութեան, տղաահանութեան ու ցեղասպանութեան ենթափողի վրայ: Նախագահը դիտել տուաւ, որ Կազգայի աւելի քան վեց ամիս բոլորած պատերազմը վառ ապացոյցն է այս իրողութեան:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՀՐԹԻՌՆԵՐ ԹԻՐԱՆ ԴԱՐՉՈՒՅԻՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ «ՄԵՋԶԷ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՄԵՋ ԳՏՆՈՒՈՂ ԻՐԱՆԻ ՀԻՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ ԸՆԵՔԸ

Երեքշաբթի, 2 Ապրիլ 2024-ին, Իսրայէլ թիրախ դարձուց Դամասկոսի «Մեզգէ» հրապարակին մէջ գտնուող Իրանի Զիւպատոսութիւնը:



ՍԱՆՎ-ի թղթակցիցին համաձայն իսրայէլեան յարձակումին հետեւանքով հիւպատոսութեան շէնքը եւ անոր յարակից կառոյցները մեծ վնասներ կրեցին:

Սուրիական օդային պաշտպանութեան համակարգը դեմ դրին յարձակումին եւ վար առին քանի մը հրթիռ:

Հրթիռակոծման գոհ գացին 38 իրանցի զինուորական պատասխանատուներ եւ սուրիացի քաղաքացիներ:

ՍՐԲԱՅԱՆ ՀԱՅՐԸ ԸՆՈՐՀԱՌՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵՅ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹՈՎ

Կիրակի, 31 Մարտ 2024-ին, Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնին առիթով, Բերիոյ Զայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Արք. Ազգարեան, Սուրբ եւ Ամմահ Պատարագէն եռք շնորհաւորական այցելութիւններ ընդունեց Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, ներկայութեամբ՝ Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան եւ Ազգ. վարչութեան ատենապետին, Բերիոյ Զայոց Թեմի Երեսփոխանական Ժողովի ատենապետին եւ անդամներու, Ազգ. Վարչութեան եւ Կրօնական Ժողովի անդամներու եւ Յարաբերական Մարմինի ներկայացուցիչի:



Շար. 12 6

ՄԵՐ ՏԻՐՈՅ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՄ ԸՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՀՈԳԵԿԱՆ ՅՆՏՈՒԹԵԱՐԲ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱՒ ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՆ ՆԵՐՍ

Մակար Եպս. Ազգարեան. «Հրեշտակին յայտարարած մէկ եւ միակ բացարձակ ճշմարտութիւնը Զրիստոսի Յարութիւնն է, մեռելներէն յարութիւնը եւ Զրիստոսի յաղթանակը»:



Կիրակի, 31 Մարտ 2024-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Զրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնին առիթով, Բերիոյ Զայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Արք. Ազգարեան հանդիսաւոր Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ իր հայրական պատգամը ուղղեց հաւատացեալներուն, Զալեպի Սրբոց Բառասկից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ:

Պատարագին ներկայ էին ՀՀ Զալեպի գլխաւոր հիւպատոս Բաբգէն Պատալեան, ՀՀ Զալեպի գլխաւոր հիւպատոսութեան խորհրդական Դաւիթ Թաղեոսեան, ՀՀ մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավար գնդապետ Արկատի Տօնոյեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետն ու երեսփոխաններ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան եւ Ազգ. Վարչութեան ատենապետ Ժիրայր Ռէսեան, Ազգ. Վարչութեան անդամներ, Յարաբերական մարմինի ներկայացուցիչ



Վրէժ Եագուպեան, ՀՍԸՄ-ի եւ ՀՕՄ-կերդ. վարչութեան անդամներ, ազգային մարմիններու, մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն:

Առաջնորդ սրբազան հայրը հանդիսաւոր թափօրով եւ դպրաց դասի «Հրաշափառ» շարականի երգեցողութեամբ մուտք գործեց եկեղեցի:

Ս. Պատարագի ընթացքին, սրբազան հոր առընթերականներն էին՝ Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չերէնցեան եւ Արժ. Տ. Գառնիկ քինյ. Չափանեան:

Եկեղեցւոյ օրհնաբեր կամարներուն ներքեւ, դպրաց դասը Ս. Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց, ղեկավարութեամբ՝ դպրապետ բարշ. Գեորգ սրկ. Սեմերճեանի:

Սրբազան հայրը Զրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան տօնին

Թղթակց
Շար. 12 12

Խմբագրական

ԻՍՐԱՅԷԼ ՅՐԹԻՌԱԿՈԾՈՒՄՆԵՐՈՒ ԱԼԻՔՆ Կ'ՆՆԴԼԱՅՆԷ

Անցնող քանի մը տարիներուն ընթացքին նկատելի փոփոխութիւն տեղի ունեցաւ տարածաշրջանին մէջ ազդեցութիւն բանեցնող ուժերու յարաբերակցութեան մէջ:

Այս փոփոխութիւնները համընկնեցան միջազգային հաւասարակշռութեան խախտումին՝ Չինաստանի եւ Ռուսիոյ, որպէս միջազգային բեռներ, ի յայտ գալէն եւ միաբեռն աշխարհին աւարտը յուշող զարգացումներէն ետք:

Կազգայի մէջ ծայր առած պատերազմը այդ ուժերու բախման բեմ հանդիսացաւ փաստօրէն, ի յայտ բերելով իսրայէլա-ամերիկեան գինուորական գործակցութիւնը ի դէմ պաղեստինեան դիմադրութեան զօրավիգ կանգնող արաբական եւ իսլամական կողմերու:

Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսութեան հրթիռակոծումը ցոյց կու տայ, որ իսրայէլ Կազգայի մէջ ոչ մէկ ձեռքբերում կրցած է ունենալ, հակառակ ի գործ դրած սպանդին: Այս կացութիւնը զինք կը մղէ սպառնալու տարածաշրջանային այլ ուժերու, ցոյց տալու պատերազմի տարածքը ընդլայնելու հնարաւորութիւններ, հրթիռակոծելով անուղղակի թիրախներ, յատկապէս տագնապալի շրջաններու մէջ, ինչպէս՝ Սուրիոյ:

Յստակ է սակայն, որ Իրան պատերազմի մէջ ներքաշուելու ծուղակը պիտի շրջանցէ, պահել ջանալով իր դիրքերը ինչպէս Յարաւային Կովկասի, այնպէս ալ Միջին Արեւելքի մէջ:

Փոխադարձ հրթիռակոծումներու ալիքը կրնայ ընդլայնիլ սակայն, մինչեւ ուժերու վերահաստատման պատկերին յստակացումը:

Այս բոլորին լոյսին տակ Թուրքիան երկկողմանի քաղաքականութիւն կը վարէ, մէկ կողմէ սպառնալով Իսրայէլի, իբրեւ պաղեստինցիներու սպանող դատապարտող իսլամ երկիր, միւս կողմէ սակայն, բացայայտօրէն, զէնք ու վառելանիւթ վաճառելով Իսրայէլի: Թրքական ներկայութիւնը Սուրիոյ մէջ ոչ մէկ օր թիրախ դարձած է ամերիկեան կամ իսրայէլեան ուժերու, որովհետեւ ներքին համաձայնութեան գիծ մը կայ այս կողմերուն միջեւ՝ տարածաշրջանի ուժերու հաւասարակշռութեան ապահովման իմաստով:

Թուրքիա պիտի չուզէ տեսնել ոչ ռուսական, ոչ ալ իրանեան ազդեցութեան զարգացումը Միջին Արեւելքի մէջ, ան բռնազրաւած է սուրիական տարածքներ ու իր կարգին սատարած ահաբեկչական գործողութիւններու եւ ահաբեկիչներու տեղափոխման տարածաշրջանին մէջ, սակայն ոչ մէկ դատապարտման արժանացած է տարածաշրջանի ուժերուն կողմէ, ոչ ալ Սուրիոյ մէջ իր ուժերը որեւէ ազդեցիկ խաղացողի կողմէ հրթիռակոծման ենթարկուած են: Սուրիան իր ճիգերով կը պայքարի թրքական ուժերուն դուրս բերման համար, ապաւինելով պարզապէս իր դաշնակիցներու դիւանագիտական աջակցութեան:

Ուժերու հաւասարակշռութեան հաստատման նոյն մրցավազքը տեղի կ'ունենայ Յարաւային Կովկասի մէջ: ՆԱԹՕ-ն եւ Արեւմուտքը կը ջանան սահմանափակել ռուսական ազդեցութիւնը, նոյնպէս շրջապատել Իրանը՝ օգտագործելով այս անգամ Ատրայէյճանն ու Թուրքիան:

Եւ որքան որ Սուրիան դարձած է միջազգային ուժերու բախման թիրախը, նոյնքան ալ Յայաստան այս օրերուն կ'ապրի ճակատագրական պահեր՝ աշխարհաքաղաքական զարգացումներու եւ միջազգային հաւասարակշռութեան վերածելաւորման լոյսին տակ:

Երկու երկիրներուն համար ճակատագրական այս օրերուն դիւանագիտական աշխատանքին կողքին անհրաժեշտ է տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան ամրագրման համար համաժողովրդային պայքար, ամուր բանակ ու ազգային շահերուն կառչած մնալու յանդուգն քաղաքականութիւն, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանուիլ ու հաւասարակշռուած քաղաքականութիւն վարել, առանց ներքաշուելու տարբեր կողմերու մրցավազքի ճահիճին մէջ:

«Գ.»

-Սուրիոյ Խորհրդարանի նախագահ Զամուտա Սապպաղ խորհրդարանի կառոյցէն ներս հանդիպում ունեցաւ Սուրիոյ մէջ ԶԶ դեսպան Տիգրան Գեորգեանի հետ:

Զանդիպումին ընթացքին Սապպաղ անդրադարձաւ Սուրիոյ եւ Զայաստանի շերտ յարաբերութեան պահպանման եւ զարգացման կարելորութեան, շեշտելով երկու երկիրներու խորհրդարանական կապերու ամրապնդման եւ տնտեսական պատուիրակութիւններու այցելութեանը բազմապատկումին կարելորութիւնը:

Սապպաղ յայտնեց, որ Սուրիոյ դէմ տարիներէ ի վեր մղուած պատերազմը Սուրիան իր սկզբունքներէն ու կեցուածքներէն շեղելու համակարգուած ճիգ է:

Սապպաղ դատապարտեց Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսութեան վրայ իսրայէլեան գրոհը, զայն միջազգային ոճիր համարելով:

Իր կարգին դեսպան Գեորգեան լուսարձակի տակ առաւ երկու բարեկամ երկիրներու սերտ յարաբերութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ եւ Զայաստանի խորհրդարաններու յարաբերութեան զարգացման կարելորութիւնը:

Գեորգեան դատապարտեց Կազգայի մէջ Պաղեստինի ժողովուրդին ցեղասպանութիւնը, ինչպէս նաեւ Դամասկոսի մէջ իրանեան դեսպանատունը թիրախ ընտրած իսրայէլեան յարձակումը, զայն բարբարոսական գրոհ համարելով:

Զանդիպումին ներկայ գտնուեցան Սուրիոյ Խորհրդարանի գրասենեակի անդամներ, սուրիական-հայաստանեան խորհրդարանական բարեկամութեան յանձնաժողովի նախագահն ու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Դամասկոսի մէջ Զայաստանի Դեսպանութեան խորհրդատու Վարդան Ադամեան:



-Կիրակի, 31 Մարտի գիշեր 2 քաղաքացի զոհուեցաւ, երբ Իսրայէլ հրթիռակոծեց Դամասկոսի շրջակայքի կարգ մը կէտերը:

Չինուորական ադրիւր մը յայտնեց, որ 31 Մարտի գիշերուան ժամը 21:30-ին Իսրայէլ բրոնազրաւուած Կոլանէն հրթիռակոծեց Դամասկոսի շրջակայքի կարգ մը կէտերը, որուն հետեւանքով 2 քաղաքացի զոհուեցաւ եւ նիւթական վնասներ արձանագրուեցան:



-Իրանի Արտաքին Գործոց Նախարարութեան բանբեր Նասր Զանասանի խստի դատապարտեց Դամասկոսի մէջ իրանեան դեսպանատան հրթիռակոծումը իսրայէլեան օդուժին կողմէ:

Զանասանի շեշտեց, որ միջազգային ընտանիքն ու ՄԱԿ-ը պէտք է խստի դատապարտեն այս յարձակումը, անել-ցնելով, որ ներկայիս գրոհին շուրջ հարցաքննութիւններ տեղի կ'ունենան, իսկ հետեւանքներուն պատասխանատուութիւնը Իսրայէլ պիտի կրէ:

Զանասանի անցնուց, որ Իրանին կը վերապահուի հակադարձելու իրաւունքը՝ իր յարմար նկատած ձեւով:



-Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութիւնը յայտնեց, որ Դամասկոսի մէջ Իրանի հիւպատոսութեան հրթիռակոծման հետեւանքով իրանցի գինուորականներուն կողքին զոհուած են 4 սուրիացի քաղաքացիներ, վիրաւորուած՝ 13: Վիրաւորներուն վիճակը ծանր է:



Լուրեր Հայաշխարհին

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԾԱԽԱՆՊԱՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԿԸ ԱՏԵՂՇԵՆ ՄԵՐ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԴԵՄ»

ՀՅՂ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 31 Մարտին Ս. Յարութեան տօնին առիթով իր պատգամին մէջ Ամենայն Յայոց Գարեգին Բ. Կաթողիկոս ըսած է.

«Ատրպէյճանի ծախալապաշտական ու սարդիչ գործողութիւնները նորանոր պահանջներով չեն դադարիր, անոնք անմիջական սպառնալիքներ կը ստեղծեն Յայաստանի անվտանգութեան դէմ»:

«Յանցագործ դրսեւորումներով կը շարունակուին Արցախի պատանդառուած քաղաքական ղեկավարութեան եւ անօրինաբար գերութեան մէջ պահուող մեր զաւակներուն նուաստացումները, ինչպէս նաեւ արցախահայութեան իրաւունքներու անտեսման, Արցախի մէջ հայկական հոգեւոր-մշակութային ժառանգութեան իւրացման ու ոչընչացման ակթաքոյց քաղաքականութիւնը», աւելցուցած է Գարեգին Բ. Կաթողիկոսը:

Ամենայն Յայոց Կաթողիկոսը խօսած է ներազգային տարակարծութիւններն ու անմիաբանութիւնը յաղթահարելու ժողովուրդի պարտքին մասին:

«Չընկրկիք մեզ պատուհասած փորձութիւններուն դիմաց, չգործեք պարտուողական հոգեբանութեամբ եւ չվերածուիք վիատած ու տկար ազգի՝ վտանգելով մեր հայրենիքի ապագան եւ անկախ պետականութիւնը: Մեր ընթացքը չի վերջանար մեր մարտիրոսներու ու քաջորդիներու նահատակութեան վայրերուն մէջ եւ ոչ ալ Արցախի մէջ ձգուած շիրիմներուն մօտ», եզրափակած է Գարեգին Բ. Կաթողիկոսը:



Վերջին շաբաթներուն ընթացքին, Նիկոլ Փաշինեանն ու իր վարչակազմը անգամ մը եւս ցնցած են Յայաստանն ու հայոց աշխարհը՝ բացայայտելով իրենց հերթական միակողմանի գիշումներու պատրաստակամութիւնը: Այս անգամ կարգը Տաւուշի մարզին է: ՀՀ ներկայ իշխանութեան վարած ազգագործան քաղաքականութեան հետեւանքով թշնամիին կը յանձնուին ռազմավարական նշանակութիւն ունեցող տարածքներ, ինչ որ պիտի յառաջացնէ ապահովական լրջագոյն սպառնալիքներ:



Արցախի յանձնումը միայն սկիզբ էր: ՀՀ իշխանութիւնը ամէն կերպ մոռացութեան կը մատնէ Արցախն ու Արցախի հարցը: Արցախի իրաւունքներու բարձրացման եւ հետապնդման բացառիկ լիազօրութիւն ունին Արցախի ժողովուրդին կողմէ ընտրուած պետական մարմինները: Այդ մարմինները վարկաբեկելը եւ անոնց գործունեութիւնը խոչընդոտելը կը նշանակեն իրաւունքներու խոչընդոտումները:

Արցախի կարգավիճակի եւ արցախահայերու հաւաքական վերադարձի իրաւունքի հարցերը հայութեան օրակարգին վրայ են եւ մինչեւ այդ հարցերը չլուծուին՝ արժանապատիւ եւ իրական խաղաղութիւն չի կրնար ըլլալ:

ՀՀ Դաշնակցութիւնը անցնող տարիներուն ընթացքին բազմիցս զգուշացուցած է Յայաստանի եւ Արցախի նկատմամբ թշնամիներէն եկող վտանգներու եւ սպառնալիքներու մասին, որոնց առջեւ գիտակցաբար եւ համոզումով տեղի կու տայ ՀՀ իշխանութիւնը:

Անհրաժեշտ է վերջ դնել ազգային արժեքներու եւ կառոյցներու դէմ պայքարելու քաղաքականութեան եւ կեդրոնական Յայոց բանակի մարտունակութեան բարձրացման ու հզօրացման վրայ:

Համոզուած ենք, որ Յայաստանի եւ Սփիւռքի բոլոր առողջ, ազգային ուժերու համախմբումը իրատապ անհրաժեշտութիւն է: Օրակարգը մէկ է՝ հայկական պետականութեան փրկութիւնը:

ՀՅՂ ԲԻՐՈ
28 Մարտ 2024

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՈՒՐ 30 ԹՈՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԲԵՌՈՒՐԿԵՅ ԿԱԶՉԱՅԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ

Յայաստանի Հանրապետութիւնը մարդասիրական օգնութիւն կ'ուղարկէ Կազգային տեղահանուած եւ Ռաֆահի անցակէտին մէջ հաստատուած, ծանր ընկերային-տնտեսական վիճակի մէջ յայտնուած բնակիչներուն:

Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնփրես»-ը, Նախագիծը կառավարութեան նիստին ներկայացուցած է ներքին գործոց նախարարի տեղակալ Արփիմէ Սարգսեան:



Անոր համաձայն, մարդասիրական օգնութեան շրջանակներուն մէջ տեղահանուած անձերու Յայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ տրամադրուած են մթերք եւ դեղորայք՝ ապահովելով վերջիններու ընկերային-տնտեսական առաջնային կարիքները:

«Այդ նպատակով կառավարութեան պահուստային ֆոնտէն ներքին գործոց նախարարութեան յատկացուած է շուրջ 19 միլիոն դրամ՝ մթերք, չոր սնունդ, դեղորայք ձեռք բերելու նպատակով:

Ընդհանուր առմամբ, մարդասիրական օգնութիւնը կը կազմէ 29,94 թոն: Քանի որ մարդասիրական օգնութեան տեղափոխումը կ'իրականացուի Պաշտպանութեան նախարարութեան կողմէ, կ'առաջարկուի Պաշտպանութեան նախարարութեան յատկացնել համապատասխան միջոցներ», ըսաւ Սարգսեան:

Երէկ Յայաստանի Հանրապետութեան կողմէ Կազգային բնակչութեան ուղղուած 30 թոն կշռող մարդասիրական օգնութիւնը տեղափոխող ինքնաթիռը վայրէջք կատարեց Եգիպտոսի Արիջ քաղաքի ռազմական օդակայանը: Այս մասին «Արմէնփրես»-ին տեղեկացուցած են Եգիպտոսի մէջ Յայաստանի դեսպանութենէն:

Եգիպտոսի մէջ Յայաստանի դեսպան Հրաչեայ Փոլատեան օդակայանին մէջ դիմաւորած է ուղեբեռը եւ օդանաւի անձնակազմին հետ միասին զայն յանձնած Եգիպտոսի Կարմիր Մահիկի ընկերութեան, որուն համակարգումով մէկ-երկու օրուան ընթացքին մարդասիրական օգնութիւնը պիտի փոխանցուի Կազգային տառապեալ բնակիչներուն:

ԶԱՆՏԱՐՈՎԱԿ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԻՉՈՒՐ ԿԸ ՀԱՄԵՄԱՏԵՆ ՊԱՐԱՌՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՅՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ շՆԱԳՈՅՆ ԲԱՊԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՐՈՍԻՈՒԹԵԱՆ ՇԵՏ»

«Յայաստանի ներկայ իշխանութիւնները իզուր կը համեմատեն դաւաճող պատմութիւն ունեցող հայկական հնագոյն քաղաքակրթութիւնը եւրոմիութեան հետ, որուն գործերը այսօր ակնյայտօրէն վատ են», ըսած է Ռուսիոյ Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:



Այս մասին կը գրէ ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը:

«Ես այսօր տեսայ Յայաստանի պաշտօնական կառոյցներու ներկայացուցիչներէն մէկուն մեջբերումը: Ան կ'ըսէր, որ Յայաստանը եւրոպական ժողովրդավարական՝ որոշ այլ արժեքներու կրողն է: Գիտե՞ք ինչը զիս կը զարմացնէ: Այն, թէ Երեւանի գործող իշխանութիւններու ներկայացուցիչները ինչո՞ւ հնագոյն հայկական քաղաքակրթութիւնը՝ եւրոպական ժողովրդավարութենէն շատ առաջ գոյութիւն ունեցած մշակոյթով, պատմութեամբ, պետականութեամբ, կը համեմատեն Եւրոմիութեան հետ, որ ներկայիս իսկապէս փակուողի մէջ յայտնուած է», աւելցուցած է Չախարովան:

«Յայաստանը մշակոյթ է, պետական կառոյց, ատեն պետականութեան այն հիմքերն են, որոնց արմատները կ'երկարին հազարամեակներու խորքը: Անոնք հազարամեայ պատմութիւն ունին», շարունակած է Չախարովան:


Ըստ Չախարովայի, Եւրոպական Միութիւնը «բացարձակ թոյլ կամը ունեցող, փլուզուող կառոյց է»:

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆ ՎՐԱՅ...

Կարո Արմենյան

Այս խորագիրով տեղադրած յօդուածս յանկարծ անհետացած է դիմատետրի իմ էջէն: Չեմ գիտեր, թէ ովքե՞ր ունին նման միջամտութիւններ բանեցնելու կարողութիւնը եւ ի՞նչ մեքենականութեամբ կ'իրագործուին նմանօրինակ գործողութիւններ: Եթէ իսկապէս խափանարարական բնոյթ ունի պատահածը, կ'ուզեմ պարզապէս յըստակացնել, որ ես կը մնամ իմ տեսակետներուն վրայ, զորս բաց մըտքով կը բաժնեմ - եւ պիտի բաժնեմ - բոլորին հետ: Եւ ինչպէս միշտ՝ կը հրաւիրեմ տարակարծիք եղողները նոյնը ընելու բանավեճի ընդունուած չափանիշներով:

Այժմ փորձեմ վերականգնել այն մտքերը, որոնք հիմ հայթայթած էին վերոյիշեալ գրառումիս:



Ես կ'ըսեի հետեւեալը.

(ա) Ահաւոր միամտութիւն է մտածել, թէ մաս կազմելով թուրքեւատրպէյճանական զամբիւղին, դուն կը կտրուիս Ռուսաստանէն: Ռուսաստանէն չե՛ս կտրուիր: Ռուսաստանէն չես կրնար կտրուիլ: Դուն պարզապէս մաս կը կազմես այն համաձայնութեան, որ գոյացած է Մոսկուայի եւ թուրքեւատրպէյճանական ուժային բեւեռին միջեւ... Այդ համաձայնութիւնը, ըստ տարածաշրջանի խմորումներուն, կրնայ ենթակայ ըլլալ այլափոխութիւններու (քեզ եւս ընդգրկելով իր տարերքին մէջ), բայց դուն երբեք չես կրնար փակել քու դռներդ Ռուսաստանի առջեւ՝ ապաւինելով Թուրքիոյ: Չես կրնար, քանի որ ԻՐԵՆԸ երբեք չեն կտրուիր իրարմէ:

(բ) Նոյնն է պարագան թուրքեւատրպէյճանական միւս զամբիւղին, որ շարունակ ձեւաւորման մէջ է Արեւմուտքի հետ: Արեւմուտքի պատգամը Հայաստանին շատ յստակ է այսօր: Արեւմուտքի ռազմավարական գործընկերը տարածաշրջանին մէջ Թուրքիան է եւ վե՛րջ: Արեւմուտքի հետ որեւէ այլ սերտակցութիւն (մանաւանդ Հայաստանի կողմէ) ենթակայ է - եւ ստորադաս - այս կանոնին: Դուն Արեւմուտքի «ռազմավարական դաշնակից»-ը չես: Դուն մաս կը կազմես Արեւմուտքի հետ թուրքեւատրպէյճանական համաձայնութեան:

(գ) Այս երկու զամբիւղները թուրքեւատրպէյճանական կայսերական ուժի խաղաքարտերն են, որոնցմով Թուրքիա նպատակ ունի դառնալ Կովկասի իրողական տերը:

(դ) Ի՞նչ են Թուրքիոյ իրական կարելիութիւնները այս մարզին մէջ: Տեսնելի ապագային, Թուրքիա կը հասնի՞ այդ կարողականութեան: Այսօրուան մեծ հարցականներէն մէկն է այս մէկը, որ կապուած է աշխարհակարգի մեծ տեղաշարժերուն հետ եւ որոնք իրենց տարերային հոլովոյթին մէջ կը գտնուին ներկայիս: Հետեւաբար դեռ շատ կանուխ է այս մասին գուշակութիւններ ընելու: Այնուամենայնիւ յստակ է, որ առաջին անգամ ըլլալով Թուրքիոյ փանթուրքիստական գրաւը Կովկասի մէջ կը թուի իրական հող ունենալ այսօր: Աշխարհակարգի այն ուժերը, որոնք որոշիչ խօսք ունին այս հարցի վճռահատման մէջ, լայնօրէն կը սատարեն այս իրականութեան:

(ե) Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ Մոսկուայի establishment-ը յաջողապէս կաշառուած է Ալիեւի կողմէ եւ չէզոքացուած: Մոսկուայի տերերը առեւանգած են Ռուսաստանի մեծապետական գերագոյն շահերը եւ կ'առաջնորդուին իրենց խմբակային եւ անձնական շահերով: Այս առումով, էապէս խափանուած է երբեմնի Հիւսիս-Հարաւ (Ռուսաստան-Հայաստան-Իրան) առանցքը: Եւ ստեղծուած այս աշխարհաքաղաքական պարապութեան (vacuum) հետեւանքով Հայաստանը (եւ առաջին հերթին՝ Արցախը) ինքնաբերաբար դարձած է «գոհելի» (expendable) քանակութիւն: Ծիշդ ինչպէս Կիլիկիան՝ 1921-ին:

(զ) Խօսելով Արեւմուտքի «երաշխիք»ներուն մասին, պէտք է շեշտել, որ թուրքեւատրպէյճանական Արեւմտեան զամբիւղն է տիրապետող իրականութիւնը տարածաշրջանին մէջ: Պարզ է, որ Արեւմուտքը պիտի չմտնէ տարածաշրջանի ճահիճին մէջ եւ պարզ է, որ Թուրքիոյ ձեռքերուն մէջ դրուած է հզօր քարթ պլանը: Թուրքիոյ տրուած է առաքելութիւնը Ռուսաստանը դուրս պահելու Կովկասէն, որուն դիմաց համաթրքական բեւեռը ինքնաբերաբար կը ստանայ Հայաստանի «բանալի»ները: Անշուշտ սատանան մանրամասնութեան մէջ է եւ շատ բան կախեալ է իրերու ընթացքէն: Եւ սակայն մեծ է հաւանականութիւնը այսօր, որ «մանրամասնութիւն»-ը դառնայ Հայաստանի դեմ տապալելով ամէն բան: Այս է Արեւմուտքը ներկայիս, որուն հետ հաշուի նստելու մեծ պարտաւորութիւն մը ունի

այսօր հայ քաղաքական միտքը:

(է) Մերկ իրականութիւնը այն է, որ այսօր Հայաստան չունի ռազմավարական դաշնակից: Եւ այս ճգնաժամը տեսաբար ամրագրող գործօնը Փաշինեանական իշխանութիւնն իսկ է: Այս իշխանութիւնը այլեւս չի պատկանիր հայութեան, քանի որ ան, առաջին հերթին, չի պատկանիր ինքզինքին: Կարելոյ չէ, թէ ան ինչպէ՞ս եկած է իշխանութեան եւ ինչքա՞ն կրնայ ապակողմորոշել երկրի ժողովուրդը: Ան այսօր որեւէ առնչութիւն չունի մեր ազգային գերագոյն շահերուն հետ: ՉՈՒՆԻ՝ ԵԹԷ ԻՍԿ ՈՒՉԷ ՈՒՆԵՆԱԼ: Անշուշտ պէտք է հարց տալ, թէ որո՞նք կը պատկանի ան այսօր: Այդ բարդ հարցումին պատասխանն է, որ այժմ կը ճշդօրէն դիւանագիտութեան մէջ՝ առաջնային առաւելութիւնը վերապահելով Թուրքիոյ:

(ը) Ներկայի տուեալներով, Հայաստան դուրս դրուած է պատմութենէն: Ան իրական խօսակից չի համարուիր - եւ չէ՛ - աշխարհակարգի ուժերուն տարածաշրջանի բեմին վրայ, քանի որ ան այս կետին վրայ գուրկ է անկախ պետականութեան մը համար կենսական եղող լծակային տարրական կարողականութիւններէ: Փաշինեանական իշխանութիւնը լայնօրէն մսխած է այդ կարողականութիւնները: Փաստօրէն այս իշխանութիւնը չունի որեւէ տալիք հայ անկախ պետականութեան լինելիութեան ապահովման ճակատին վրայ: Իր ներկայ դրութեամբ, ան միայն իր քաղաքական մնանկութիւնն է, որ կը պարտադրէ երկրին՝ հարցականի տակ դնելով Հայաստանի վերջին բեկորին գոյութիւնը:

(թ) Այս պայմաններուն տակ, Փաշինեանական իշխանութիւնը պէտք էր ինքնակամ հեռանար իշխանութեան դիրքերէն: Ան չէ՛ հեռացած: Ընդհակառակն ան ամուր կառչած է իշխանութեան եւ հակառակ ժողովրդական Ընդդիմութեան իրերայաջորդ ալիքներուն՝ ան ամրապնդած է իր տեղը յենուելով ոստիկանական խուճդուժ միջոցառումներու: Ան կրցած է փաստել իր դիմացկունութիւնը արտաքին ուժերուն: Հետեւաբար ինչո՞ւ գարմանալ, որ ան «սիրուած» է բոլոր մեծապետական ուժերէն: Ներառեալ՝ Մոսկուայէն: «Սիրուած» է մանաւանդ թշնամիէն:

(ժ) Արդար ըլլալու համար պէտք է աւելցնել, որ ան նաեւ «սիրուած» է մեզմէ՝ ժողովուրդէն... Որքան ատեն որ ան կը յաջողի վախցնել եւ համոզել մեզ, որ պէտք է գիշիլ թշնամիին ամէն ինչ՝ խոյս տալու համար պատերազմէ, մենք եւս, մեր կարգին, կ'ամրապնդենք Փաշինեանական համակարգի գոյութիւնը իշխանութեան դիրքերուն վրայ: Այս առումով, ազգը դրուած է իր գոյութեան ամէնէն անհեթեթ կացութեան մէջ: Իր բոլոր տարակարծութիւններով հանդերձ երկիրը կը յօժարի գործել Փաշինեանական փաթեթին մէջ: Եւ որքան ատեն, որ ազգը - թէկուզ բողոքի եւ կրաւորականութեան դիրքերէ - կեւընդունի գործել Փաշինեանական փաթեթով եւ կը դրուի ինքզինքին դեմ սակարկելու դրութեան մէջ, Փաշինեանական համակարգը անպարտելի է: Եւ շնորհիւ իրեն՝ անպարտելի է նաեւ թըշնամին: ՊԱՐԶ ԽՕՍԵՐՈՎ, ԱՄԵՆ ՕՐ, ՈՐ ՓԱՇԻՆԵԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԸ ԳՈՐԾԷ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ ՎՐԱՅ ԵՒ ԿԸ ԳՈՐԾԷ ՅԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՄԵՆՔ ՕՐ ՄԸ ԱԻԵԼԻ ԿԸ ՊԱՐՏՈՒՆՔ ԵՒ ԹԸՇՆԱՄԻՆ ԲԱՅԼ ՄԸ ԱԻԵԼԻ ԿԸ ՅԱՌԱՋԱՆԱՅ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԵՐԵՆ ՆԵՐՍ: ԵՒ ԱՅՍ ԸՆԹԱՑՔԸ ՎԵՐՋ ՉԻ ԿՐՆԱՐ ՈՒՆԵՆԱԼ: ԱՅՍ ԸՆԹԱՑՔԸ ՉՈՒՆԻ ՅԱԳԵՏՄԱՆ ՇԵՄ: ԱՆՈՐ ՅԱԳԵՏՄԱՆ ՇԵՄԸ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԱԲԱՆԱԿ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻԷԻ ԱՄԲՈՂԱԿԱՆ ԲՆԱՋՆՁՈՒՄՆ Է:

(ժա) Հետեւաբար ներկայ փակուղիէն դուրս գալու գործին անյետաձգելի նախապայմանն է Փաշինեանական համակարգի ամբողջական եւ վերջնական լուծարումը: Այս կետին վրայ, Ընդդիմութեան գործին ՄԻԱԿ չափորոշիչն է ասիկա: Այսինքն այն ռազմավարութիւնը՝ որ վերջ պիտի տայ մեր երկրի Փաշինեանական փակուղիին եւ ինքզինք դնէ տարածաշրջանի սակարկութիւններու սեղանին վրայ որպէս իրաւատիրոջ: Ազգին կենսական առաջնահերթութիւնն է անմիջապէս եւ ամէն գնով զրկել թշնամին եւ բոլոր արտաքին ուժերը իրենց ներքին յենարանէն: Ամէնէն վճռական ձեւով համոզել քաղաքական բեմը, որ Փաշինեանական համակարգը տերը չէ երկրին: Լուծարել Փաշինեանական համակարգը հզօր սկիզբն է Հայաստանի լծակային կարողականութիւնները վերականգնելու կենսական գործին: Առանց այդ պատմական քայլին, Հայաստան կ'ամրապնդէ միայն իր ճորտային գոյութիւնը տարածաշրջանի խաղատախտակին վրայ: Ան շարունակաբար կը կրէ իր շղթաները փոխանակ ջարդելու գանոնք եւ դուրս բերելու ինքզինք այսօրուան դժիւմ փակուղիէն:

Հակառակ արտաքին ուժերու եւ թշնամիին կողմէ ամենօրեայ ռեժիմով ներարկուող հոգեբանական թոյնին, Հայաստան պիտի անյապաղ եւ մեծ թափով հաստատէ ի տես աշխարհակարգի ուժերուն, որ իր ազգային ուժականութեան պաշարները չեն սպառած: Ան անգամ եւս ցոյց պիտի տայ, որ այդ պաշարները անսպառ են: Փաշինեանական համակարգն է, որ սպառած է ինքզինք եւ հետեւաբար իրաւունք չունի տեղ գրադեցնելու ՀՀ իշխանութեան կեանքին մէջ: Եւ ազգը չունի թանկ հաճոյքը դանդաղելու: Հայաստան լքեալ գոյք չէ եւ պիտի չըլլայ: Հասած է ժամը վերջնական առճակատման: Հասած է ժամը վերականգնելու մեր տիրական դիրքերը պատմութեան մայրուղիին վրայ:

ՀԵՐԻԱԹ ՉԷ ՍԱ

ՄԱՌՑՈՒՄԸ ԵՐԳԷ ՄԸ ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ս. Մահաբեճեան

Ֆրեյդը հաւանաբար կրնայ լուսաբանել այն, ինչ որ պատահեցաւ ինձի՝ երկու օր առաջ:

Առաւօտուն, երբ արթնցայ, ուղեղիս մէջ կը թափառէր մեղեդի մը (վըստահ եմ որ եւ մեկուդ ալ կը պատահի նոյնը), երգի մը պատահիկը, որ առաջին վայրկեաններուն անուն չունէր: Յետոյ, այդ մեղեդիին քիչ մը ձեւ-կերպարանք առաւ եւ զիս տարաւ մանկութեան օրերս: Մինչեւ իսկ յիշողութեանս մէջ վերականգնեցան քանի մը նախադասութիւն այդ երգէն, որ հին-հին օրերուն լսած եմ հօրմէս, մեծ մօրմէս եւ հասակակիցներէն՝ Յեղասպանութենէն վերապրողներէ: Մեր ազգին վիճակուած բազում ողբերգութիւններէն մեկուն արտայայտութիւնը կը գտնէք ինձ:



Ամբողջ երգը չեմ սորված ատենին, միայն կը յիշէի առաջին տողը. «Հայրենիքդ մոռցի՛ր, կ'ըսեն օտարներ...»: Գրադարանիս մէջ եղող շարք մը հին երգարաններ պեղեցի. ո՛չ մէկ արդիւնք: Վերջին փորձ մը ըրի եւ դիմեցի դարուս հրաշալիքին՝ համացանցին եւ... վոպա, նոր օրերու Արքիմետէս մը զգացի ինքզինքս եւ ներքին ձայնս բացագանչեց. «Եվրեթա՛»: Գտայ բառերը, թէեւ վստահ չեմ, որ անիկա լիովին հարազատ է բնագիրին, որովհետեւ գոնէ կետադրական եւ այլ «հանելուկներ» կային: Կարողութեանս սահմաններուն մէջ՝ լուծեցի: Ահա այդ երգը.

- Հայրենիքդ մոռցի՛ր, կ'ըսեն օտարներ,
- Անիծեալ է, լոկ փուշ ունի ու աւեր:
- Մեր հող դրախտ, ջուրն օշարակ,
- Օդ քաղցր է, օդ քաղցր,
- Եկո՛ւր, պանդուխտ, սրտիկդ անո՛ր նուիրէ:

Թէեւ ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի, Ես կը սիրեմ Հայաստան, ապրի հոգիս՝ Կիլիկիան:

- Թող հայութեան առջեւ լռէ պատմութիւն,
- Թող տիեզերք մոռնայ հայուն մեծութիւն:
- Ես կը սիրեմ, չեմ մոռնար,
- Անմահ, անմահ
- Իմ հայրենիք, այրիացեալ Հայաստան:

Թէեւ ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի, Ես կը սիրեմ Հայաստան, ապրի հոգիս՝ Կիլիկիան:

Սիրելի՛ ընթերցողս: Եկո՛ւր, փորձենք քիչ մը Ֆրեյդը խաղալ եւ «վերծանել» թէ այս երգը ուրկէ՛ ուր դուրս պրծաւ յիշողութեանս շտեմարանէն:

Այս երգը ծնած է իմ ծնունդէս շատ առաջ, այն օրերուն՝ երբ մեր ժողովուրդը ենթակայ էր թրքական հալածանքներու, ջարդերու, իսկ բարեկամ նկատուող օտարներ երբեմն չէին վարաներ մեզի խրատ տալու, թէ պէտք է մոռնանք մեր հայրենիքը, ու կը թուէին անոր անյարմարութիւնները: Չէ՞ որ աւանդավէպ մըն ալ կ'ըսէ, թէ Աստուած իր հողաբաշխումի օրերուն, պահ մը մոռցեր էր Հայը եւ վերջին պահուն մտաբերելով՝ անոր շնորհած է հայկական լեռնաշխարհի քարքարոտ ու յաճախ անջրդի տարածքը: Անշուշտ կայ նաեւ միւս աւանդավէպը, թէ՛ Հայաստան իսկապէս երկրի վրայ դրախտ մըն է, «Հայաստան, երկիր դրախտավայր...»

Ի՞նչ կը պատահի այսօր: «Հայրենիքդ մոռցի՛ր» (ըստ Եւրեթեան՝ թրքահնար) պատգամին միացած են Երեւանի իշխանաւորն ու իր «շքախումբը»: Շուշին ու Արցախը հռչակեցին «տժգոյն ու դժբախտ» (համեմատել երգին երկրորդ տողին): Հիմա, Ատրպէյճանին նուէր տրուած Արցախը մոռցած են եւ կը փորձեն մեր ժողովուրդն ալ համոզել՝ թէ մի՛շտ ալ հայապատկան այդ հողամասը՝ Հայաստան աշխարհի մէկ անքակտելի տարածքը պէտք է մոռնալ: Երբ սահմանագծումի մասին կը խօսին՝ իսկ այդ հողամասը դուրս դրուած է օրակարգէն, հոգ չէ թէ հիմա օտարներ իսկ կը պնդեն, որ Արցա-

խի հարցը չէ փակուած, ժողովուրդին իրաւունքները՝ տուն դարձի՛ իրաւունքը անհերքելի են: Մինչեւ իսկ Արցախի պետական ղեկավարութեան կը գլխան Հայաստանի մէջ գործ ընելու՝ իրաւունք հետապնդելու իրաւունքը: «Հայաստանի մէջ միայն մէկ կառավարութիւն կայ», կը պոռայ անմիտը, կարծէք թէ արցախցիք կամովին Հայաստան եկած են, ու եկած են խլելու այն աթոռը, որուն անարժանաբար կպած կը մնայ (կը պահեն) ինք:

Ինչպէ՛ս չի շէջ դիւանագիտական այն ծաւալուն աշխատանքը, որ տասնամեակներ շարունակ տարաւ Հայաստանի անդրակիկ հանրապետութեան պատուիրակութիւնը՝ միջազգային ոլորտներու, ընդհանրապէս եւրոպական երկիրներու մէջ (Ազգերու Լիկա, Հայաստանի նախկին դաշնակիցներ...): Վտարանդի՛ աքսորի կառավարութեան դերը ստանձնած այդ պատուիրակութիւնը ո՛չ մէկ տեղ անհանդուրժողութիւն գտաւ, ի՛նչ խօսք, որ անոր ճիգերը չարդիւնաւորուեցան՝ յետ-աշխարհամարտեան խաղերու եւ նորացուած մրցակցութիւններու հետեւանքով: Միակ չհանդուրժողներն էին Թուրքիան, քիչ մըն ալ՝ անոր հետ 20-ական տարիներէն սիրաբանութեան էջեր կերտող կարմիր կայսրութիւնը...

Հիմա, այլ բառամթերքով՝ «դժբախտ եւ տժգոյն» կը դասուին նոյնիման Հայաստանի տաւուշեան շրջանները (եւ սա շարունակութիւնն է, ո՛չ սկիզբը երկանց): Ի՞նչ որակում կարելի է տալ մեկուն, որ հողերու կամ ճամբաներու պատկանելիութիւնը կը չափէ... այդ շրջաններուն մէջ ճաշարաններու եւ պանդոկներու գոյութեամբ: Եթէ նման կառույցներ չկան, ուրեմն Ատրպէյճանին հախ է ունենալ այդ ճամբաները: Եկէ՛ք, պահ մը նոյն տրամաբանութեամբ մօտենանք, օրինակի համար, Ալզաս-Լօրէնի շրջանին. Ֆրանսա, ուրեմն, պէտք է Գերմանիոյ յանձնէ այդ գօտիին այն շրջանները, որոնց ճամբաներուն վրայ ճաշարան ու պանդոկ չկայ (սա արդէն այլ ցուցանիշ է, թէ մեր մարդիկը կը մտածեն... ստամոքսով): Ամենէն ողբերգական կետերէն մեկն ալ այն է, որ Ատրպէյճանին նուէր տրուելիք այդ (եւ այլ շրջաններուն) մասին կը խօսին «պէտք է վերադարձնենք»-ով: Սա ինքնաբերաբար մտածել կու տայ, որ անոնք իսկապէս ալ Ատրպէյճանին պատկանած են, մենք գանոնք պահ մը խլած ենք Ատրպէյճանէն, եւ հիմա ժամանակը եկած է վերադարձնելու: Այս ծուղակին մէջ կ'իյնան մինչեւ իսկ ամենէն հաւատարիմ հայրենասերներն ու քաղաքական մեկնաբանները, մասնագետները, որոնք միւս կողմէ արդարօրէն կը շեշտեն՝ երբ չտարուին այդ ծուղակով՝ որ Հայաստան Ատրպէյճանի ու Թուրքիոյ տալիք հող չունի, ընդհակառակն, հսկայական մուրհակներ կան կամաթուրանականներու ճիտին:

Քիչ մը յառաջ անցնելով՝ ձայնակցիք երգին հետեւեալ տողերուն.

Թող հայութեան առջեւ լռէ պատմութիւն, Թող տիեզերք մոռնայ հայուն մեծութիւն:

Օտարներէն առաջ, Երեւանի իշխանաւորներն են որ ժպիրի յանդուրեւեամբ կը փորձեն ազգը համոզել, որ հիմա կայ նոր Հայաստան, նոր պատմութիւն, կայ Հայաստանի հանրապետութեան ժամանակակից պատմութիւն, չկայ «Պատմական Հայաստան» (բառացիօրէն՝ «հայրենիքդ ու պատմութիւնդ մոռցի՛ր» կ'ըսեն՝ յառաջ անցնելով օտարներէն): Մեր հայրենիքը ծնունդ առած է, վիճակներուն տրամաբանութեամբ՝ «Թաւշեայ յեղափոխութեան» մեկնակետէն սկսեալ, արարիչն է Նիկոլ Փաշինեան (իսկ իրականութիւնները հազար ու մէկ վկայութիւն կուտակած են, որ «քայքայիչ ու քանդիչ» որակումները շա՛տ մեղմ են այս «արարիչ»-ին համար): Երգին՝ «թող տիեզերք մոռնայ հայուն մեծութիւն»-ը այսօր կը թարգմանուի Արարատի եւ մեր պատմական բոլոր հողերուն ուրացումով, արիւնով ու քրոտիկներով ձեռք բերուած մեր յաղթանակներու եւ յառաջխաղացներու դրժումով (1991-էն ասդին ո՛վ դրական քայլ առած է որ...):

Գողտրիկ այս երգը, սակայն, ողբի եւ պարտուողականութեան, անձնատուութեան ու ինքնամոռացութեան տողերէն անդին՝ ունի անժամանցելի պատգամներ: Հոն կայ հայրենիքին հանդէպ սերը, հոգ չէ թէ հայրենիքը թուի «ամուլ ու ամայի», ինչպէս որ ըրին Արցախին: Այս երգը երգողները իրենց հոգիին եւ ԶԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՍԹԻՆ մէջ ամուր կերպով արձանագրած էին այն, որ հայրենիքին

...հող դրախտ, ջուրն օշարակ,

Օդ քաղցր է, օդ քաղցր,

Եկո՛ւր, պանդուխտ, սրտիկդ անո՛ր նուիրէ:

Ինչպէս նաեւ՝ դժբախտութիւններ դիմագրաւող հայրենիքը սիրելու յանձնառութիւնը:

«Մոռցուած» երգերէն ալ հզօր պատգամներ կը հասնին այսօր, լիցք կը պարգեւեն պայքարի այսօրուան էջերուն: Շուտով պիտի գայ նոր Ապրիլ 24 մը, նոր Մայիս 28 մը, որոնք ստամոքսապաշտներուն տրամաբանութեամբ վերապահուած են «Պատմական Հայաստանին»...

www.kantsasar.com

ԹԱՏՐՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՈՒՄՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թատրոնը երկրագունդի վրայ այն տեղն է, ուր ստեղծուած է տարածութիւն մը, որուն մէջ հաւասար ենք բոլորս: Ան կը տարածուի անտեսանելի աշխարհատարածքի մը վրայ միաձուլուելով թատերասերներուն եւ թատրոնի նուիրեալներուն կեանքին: Թատրոնը քմահաճ ասպարէզ է, կենցաղ է, եւ անոր բարոյական հանգամանքի բարձրութեան ոչ մէկ արուեստ կրնայ հաւասարիլ:

Մեր ազգային եութեան գարթօնքը թափ առաւ յատկապէս հայ թատրոնի ծաղկումով, իսկ մեր սփիւռքեան իրականութեան մէջ ան եղաւ մեր ինքնութեան եւ մայրենի լեզուի պահպանման գրաւականը:



Թատերական արուեստը համախմբող շարժում մըն է, որուն մեծագոյն փաստը Հայկէպի հայ թատերախումբերու համախմբումն է «ՀՀԹ» անուան տակ: Անոնք վճռած են յարթահարել ամէն խղճընդոտ, մնալ քով-քովի, հանդէս գալ որպէս մէկ հաւաքական ոյժ ու հետապնդել միայն մէկ նպատակ՝ գերադասել թատրոնը:

Թատրոնը ունի միջազգային տօն, որ ամէն տարի կը յիշատակուի 27 Մարտին: 2016-էն սկսեալ աւանդոյթ դարձաւ Հայկէպի մէջ յիշատակել գայն ՀՀԹ-ի կազմակերպութեամբ, լոյսի բերել անոր կարեւորութիւնը, մշակոյթի տարածման եւ պահպանման վսեմ առաքելութիւնը:

Չորեքշաբթի, 27 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, ՀԵ Ընկերակցութեան «Ա. Գալաֆեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ ՀՀԹ-ին յիշատակուեցաւ Թատրոնի Միջազգային տօնը, ներկայութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Արք. Ազգարեանի, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց ներկայացուցիչ Արժանապատիւ Տ. Կոմիտաս Վրդ. Տատաղլեանի, Հայ Աւետարանական համայնքի ներկայացուցիչ Պատուելի Սիմոն Տէր Սահակեանի, ՀՀ գլխաւոր Հիւպատոսութեան Խորհրդական-Հիւպատոս Բաբգէն Պատալեանի, ինչպէս նաեւ Թեմի Ազգային Վարչութեան, հոգեւոր հայրերու, հալէպահայ մշակութային, հայրենակցական եւ բարեսիրական միութիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչներու եւ թատերասերներու:

Հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Կրթասիրաց Մշակութային Միութեան «Վ. Աճեմեան» թատերախումբէն ճորճ Նալչաճեան, ան դիտել տուաւ, որ թատրոնը մշակոյթ է, ազգի մը ինքնութիւնը: Անոր նպատակներէն մէկն է հայ մշակոյթը մատչելի դարձնել հանրութեան՝ նոր սերունդը հաղորդակից դարձնելով մեր մշակութային ժառանգութեան: Թատրոնի նուիրեալները իրենց համոզումով եւ նուիրումով, թատրոնի միջոցով շունչ կու տան մեր հաւաքական գոյութեան եւ մշակութային կեանքին:

Արաբերէն բացման խօսքով Համազգայինի «Լ. Շանթ» թատերական միաւորէն Սարգիս Պալապանեան երանի տուաւ բոլոր անոնց, որոնք թատրոնի ընդմէջէն կը ներխուժեն կեանք, մեզ ծանօթացնելով բոլոր մշակոյթներուն եւ սորվեցնելով միշտ կառչած մնալ մեր արմատներուն, ինքնութեան եւ հողին: Ան աւելցնելով ըսաւ, որ թատրոնով կ'ապրինք ու կը գօրանանք, հաւատալով, որ մեր սերը, մեր բնոյթը, մեր հայրենասիրութիւնը, մեր դատն ու պատմութիւնը արտայայտելու միջոց է:

Օրուան հանդիսավար ՀԵ Ընկերակցութեան «Պ. Աղամեան» թատերախումբէն Չեփիւռ Մխճեան-Նալպանտեան մերթ ընդ մերթ իր մեքերումներով, մեկնաբանութիւններով եւ մտորումներով համ ու հոտ աւելցուց երեկոյին:

Գեղարուեստական յայտագիրով յաջորդաբար հանդէս եկան՝ Համազգայինի «Լ. Շանթ» թատերական միաւորէն Անի Պողիկեան (դաշնամուր) եւ Սերենա Պերպերեան (ջութակ), Կրթասիրաց Մշակութային Միութեան «Վ. Աճեմեան» թատերախումբէն Դիա Մարիա Զեյնեան (ասմունք) եւ Յակոբ Գասարեան (դաշնամուր):

Սովորութիւն եղած է, որ ամէն տարի միջազգային թատրոնի գործիչ մը յղէ տարուան ուղերձը: Այս տարուան խօսքը իրապարակուեցաւ Նորվեգիացի գրող, թատերագիր՝ Ճօն Ֆօսի կողմէ, «Արուեստը Խաղաղութիւնն է» խորագիրով, որուն հայերէնի թարգմանութիւնը ընթերցեց ՆՍՄ Միութեան «Անդրանիկ» թատերախումբէն Մարալ Անուշեան-Գոնճայեան, իսկ արաբերէնի թարգմանութիւնը՝ Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութեան «Վասպուրական» թատերախումբէն Սոնա Գրտանեան Պոտիկեան:

Օրուան բանախօսն էր Հայկէպի «Համազգայինի Հայագիտական Ամպիոնի» եւ Երեւանի «Խաչատուր Աբովեան»-ի անուան մանկավարժական համալսարանի հայոց լեզուի եւ գրականութեան բաժնի շրջանաւարտ, ՀԵԸ-ի «Աղամեան» թատերախումբի արժաթեայ մետալակիր Երան Չեյթունցեան: Ան ներկայացուց հալէպահայ թատրոնի եւ թատերախումբերու պատմութիւնը յայտնելով, որ Ցեղասպանութեան յաջորդող տարիներուն մեր ազգային կեանքի կազմաւորման մէջ մեծ եւ նշանակալից դեր ունեցած է

հայ թատրոնը, որուն ծննդավայրը դարձած է հայ վարժարանը: Հայը հազիւ իր ֆիզիքական գոյութիւնը ապահոված ձեռնամուխ եղած է իր հոգեւոր գոյութեան վերականգնումին՝ հիմնելով հայ դպրոցը, եւ շատ չանցած նոյն առաքելութեան բաժնեկից թատրոնը: Չեյթունցեան հալէպահայ թատրոնի պատմութիւնը բաժնեց երեք շրջաններու, նախքան 1970-ական թուականներ, որ կը յատկանշուէր դպրոցական ներկայացումներով եւ տեղական ուժերով կազմուած խումբերու առկայութեամբ: Ապա 1970-ական թուականներէն ետք, երբ թատերական կեանք կը յատկանշուէր արհեստավարժութեամբ եւ վերջապէս 2011 թուականէն ետք, երբ Սուրիոյ կեանքը փոթորկող պատերազմին պատճառով դաժան մարտահրաւերի դիմագրաւումով մշակութային կեանքը սկսած էր մաքառիլ ի խնդիր գոյութեան իրաւունքին: Ապա հակիրճ ձեռով ներկայացուց հալէպահայ՝ ՆՍՄ Միութեան «Անդրանիկ», ՀԵ Ընկերակցութեան «Պ. Աղամեան», ԳՎՄ Միութեան «Վասպուրական», Համազգայինի «Չաւարեան», «Լ. Շանթ» եւ «Ռազմիկ» մանկապատանեկան, ԿՄ Միութեան «Վ. Աճեմեան» թատերախումբերու ծաւալած գործունէութիւնները:

Չեյթունցեան աւելցնելով ըսաւ, որ բոլորիս ճիտին պարտքն է մտածել նոր ռազմավարութեան մը մասին, որպէսզի կանգուն պահենք մեր թատերական հարուստ ավանդոյթները՝ յանուն մեր անցեալի հարուստ պատմութեան:



Հանդիսութեան աւարտին իրաւորուեցաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Մակար Ս. Արք. Ազգարեանը, որ նախ ՀՀԹ-ի կողմէն տրամադրուած յուշանուէրով մը պատուեց Երան Չեյթունցեանը, ապա խօսք առնելով յայտնեց, որ բանախօսին փոխանցած տեղեկութիւններուն ընդմէջէն մեր առջեւ գծագրուեցաւ հսկայ ճիգը եւ ջանքը, որոնք տարուած են յանուն թատրոնին եւ ճիշդ ժամն է խոնարհելու՝ այդ բոլոր հսկաներուն առջեւ, իրենց հոգիներուն, շունչին, ժամանակին, երեւակայութեան, մտածողութեան, նախանձախնդրութեան եւ հաւատքին առջեւ: Սրբազան հայրը նշեց հալէպահայ կեանքի մշակութային հարուստ գործունէութիւնը շեշտելով, որ հպարտութիւն է տեսնել մեր ժողովուրդի գաւակները իրենց պարտականութեան գիտակից, հաւատքի ջահը ձեռքերուն, նախանձախնդրութեան կրակով իրենց նպատակներու իրագործման ճիգին մէջ, որուն համար միայն երախտագիտութեան եւ յարգանքի արժանի են:

Մակար Սրբազան մաղթեց, որ թատրոնը թափաքներ արձանագրէ եւ Աստուած թատրոնի տիտաններուն ուխտը շարունակողներուն բազուկները գօրացնէ, շնորհք, իմաստութիւն, կարողութիւն եւ եռանդ պարգեւէ անոնց: Ապա իրաւորեց ներկաները բանալու իրենց սիրտերը իրաւորելով գԱստուած ներգործելու իրենց մէջ եւ Ս. Յարութեան տօնի գօրութեամբ յաղթելու չարին:

Հանդիսութիւնը աւարտեցաւ յիշատակի խմբային նկարներով:
Կատիա Պետրեան - Ստանկուլեան

ՍՐԲԱՆԱՆ ՀԱՅՐԸ...

Սկիզբ՝ էջ 1

Ս. Յարութեան տօնին առիթով սրբազան հօր իրենց շնորհաւորութիւնները փոխանցեցին Հայկէպի պետական, ապահովական, կուսակցական եւ կրթական բարձրաստիճան պատասխանատուներ:

Սրբազան հօր այցելեցին նաեւ ՀՀ Հայկէպի գլխաւոր հիւպատոսը, հիւպատոսութեան խորհրդականը, ՀՀ մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավար գնդապետը, Հայկէպի քոյր յարանուանութիւններու հոգեւոր պետեր եւ պատուիրակութիւններ, Թեմի եկեղեցիներու քահանայ հայրեր, թաղական խորհուրդներ, դպրաց դասեր, ազգային մարմիններու, բարեսիրական եւ կրթական հաստատութիւններու, հալէպահայ կազմակերպութիւններու, մարզական, մշակութային, բարեսիրական, երիտասարդական եւ պատանեկան միութիւններու ներկայացուցիչներ, որոնք իրենց ջերմագին բարեմաղթութիւնները փոխանցեցին առաջնորդ սրբազան հօր, Թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին:

Սրբազան հայրը այցելուներուն մաղթեց, որ մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուս Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնը խաղաղութիւն պարգեւէ սուրիական հայրենիքին եւ բարօրութիւն՝ Սուրիոյ ժողովուրդին:

Պրիմալետա

ԳՐՈՂԻՆ ՏԵՂԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ




Մարուշ Երամյան

Երբ կը խօսինք գրողին տեղին մասին, կը նշանակե՛ք, որ այդ գրողին դեր մը կը վստահինք նոյն այդ ընկերության մեջ: 19-րդ դարուն հայ գրողը ոչ միայն տեղ, այլ և շատ հիմնական դեր ուներ ընկերության մեջ: Օրուան ամենէն հրատապ հարցերուն մասին գրողները ըսելիք ունեին, եւ այդ ըսելիքը լրջօրէն կ'ընկալուէր ընթերցող հասարակութեան կողմէ, որոշիչ դեր կատարելով այդ հասարակութեան կեցուածքին մէջ: Այսօր արդէն 21-րդ դար մտած, Սփիւռքի մէջ հաստատուած հայ գրողին տեղին եւ դերին քննարկումը նոր մօտեցումի կը կարօտի:

Իրապէս տեղ ունի՞ այսօր հայ գրողը իր ապրած ընկերութեան մէջ. ո՞ր է այդ տեղը եւ ի՞նչ է գրողին դերը:

Գլխաւոր հարց մը ինքզինք կը գագցնէ՝ այդ դերը ընկերութիւնը ի՞նչն է, որ կու տայ գրողին, թե՞ գրողը ինք կը վերցնէ գայն իր ուսերուն:

Գաղութները վերջերս, քաղաքական թէ ընկերային պատճառներով, սկսած են այնքան տարբերիլ իրարմէ, որ գրեթէ անկարելի կը դառնայ գտնել լուծումներու այնպիսի ամաչարկութիւններ, որոնք ընդհանուր յայտարար դառնան գաղութները յուզող հարցերուն համար: Բայց այստեղ պիտի փորձենք լայն գիծերու մէջ քննարկել կացութիւնը:



Նկատի առնելով, որ գրեթէ բոլոր գաղութներն ալ կը շարունակեն իրենց կէթոյական գոյութիւնը՝ իրենց շրջանակներուն մէջ փակուած, կրնանք նշել այն քանի մը կէտերը, որոնք կը յատկանշեն գ անոնք. -

1.- Այստեղ ոչ միայն մշակոյթը, այլեւ գրականութիւնը երկրորդական, նոյնիսկ երրորդական կարգի գբաղումներ են ընկերության համար: Գրողը կը յիշուի միայն, երբ անոր մտաւորականի, եւ ոչ ստեղծագործողի կարիքը գագցուի, ինչպէս օրինակ երբ դասախօսութեան մը կամ հանդիսութեան մը համար դուրսէն դասախօս հրաւիրելու պիտօճէ չկայ եւ կագ մակերպողները ստիպուած կ'ըլլան տեղական ուժերով գոհանալ (ինչպէս կը սիրեն ըսել):

2.- Գրողի մը դերին գլխաւոր բեմը մամուլն է: Բայց ընթերցող հասարակութիւնը ոչ մէկ հակագդեցութիւն կը ցուցաբերէ: Արտայայտուած գաղափարները կրնան նոր ըլլալ, կրնան անյարիր ըլլալ ընթերցողին, բայց անորմէ լսուածը միայն լռութիւն է, որ պերճախօս իսկ չէ: Այս կացութիւնը ամբողջապէս կը հակադրուի նախկին վիճակին, երբ ընթերցող հասարակութիւնը իր խօսքը ուներ հրատարակուած նիւթերուն առնչութեամբ:

3.- Տակաւին կայ կուսակցութիւններու դիրքորոշումը, որ կրնայ պատճառ դառնալ, որ գրութիւն մը լոյս չտեսնէ, կամ խօսք մը ճամբայ չգտնէ դէպի ընթերցող հասարակութիւնը: Այս պարագային ի՞նչ դերի մասին կարելի է խօսիլ:

Յաճախ ըսած են, որ գրող մը իր գեղարուեստական գործերուն համար կրնայ կարծիք կամ գնահատանք չսպասել, որովհետեւ այդ գրուածքները թէեւ ուղղուած ընթերցողին, գրուած են ներքին պահանջ-գոհացումի մը գսպանակներով: Սակայն երբ հասարակութիւնը յուզող հարցի մը մասին է գրուածքը, որուն համար գրողը միայն լռութիւն կը քաղէ, այդտեղ սխալ դրուածքի մը հոտը պէտք է առնել:

Ոչ միայն Յալէպի նման անանդապահ գաղութ մը, այլեւ միջազգային գրական հրապարակը գրողներու երկու գլխաւոր եւ տարբեր խմբաւորումներ ունի:

ա- կան անանդապահները, որոնք եութեամբ անանդապահ են, եւ որոնք համար հայ գրողը հայ է, գրող ըլլալէ առաջ (թէեւ բնաւ ճիշդ չէ այս երկուքը անջատել), եւ ուրեմն «ի ծնէ» յանձնառութիւն մը ունի՝ ծառայել հայութեան, եզր մը ասիկա, որ կրնայ յստակ չըլլալ իրեն համար, բայց որ

կը ստիպէ գինք «երգել» այդ հայութիւնը, յօդուած գրել այդ մասին, բանախօսել Ապրիլ 24-ին, Վարդանանց տօնակատարութեան եւ այլն:

բ- եւ կան անշուշտ արդիականները, որոնք միակ յանձնառութիւնը գրականութեան հանդէպ է, համոզուած, որ ներքին ամուր կառնոց ունեցող հայը նախ անպայմանօրէն «հայութիւն» պիտի երգէ, ի՞նչ ալ ըլլայ իր կըմնոյթը, եւ երկրորդ՝ հայութիւնը անելի ապրելու յատուկ եզր մըն է, քան ծանուցելու:

Այս երկու խմբաւորումներուն համար գրողին տեղն ու դերը շա՛տ տարբեր, նոյնիսկ հակասական հասկացողութիւններ ունին:

Անանդապահ գրողին տեղը. -

Եթէ բիրտ ըլլալու չափ յստակ եւ կտրուկ ձեւով ըսենք՝ քարոզիչի ամպիոնին, պարապ սրահի մը առջեւ:

Սրահը կրնայ պարապ չըլլալ. մտիկ ընողները սակայն անոնք են, որոնք պէտք չունին նման քարոզներու: Պէտք ունեցողներուն տեղն է, որ պարապ է:

Արդիական գրողին տեղը. -

Նոյնքան բիրտ եւ յստակ՝ դժուար է ճշդել: Եթէ միջազգային ամուսնու նայինք, այդ տեղը չկայ ի սկզբանէ, որովհետեւ արդի գրողը կը հաւատայ, որ իր գրականութիւնը ոչինչ կ'ուզէ փոխել ընկերութենէն: Իրը այն գետակն է, որ իրեն եկողները կը գովացնէ, կը գոհացնէ, բայց ոչ մէկ օգուտ ունի երկրի տնտեսութեան (անշուշտ խօսքը հոս արեւմտեան չափանիշերով ժողովրդային գրականութեան մասին չէ, որ գիրքի մեծ եւ շահաւետ շուկայ ունի): Այդ գրականութեան չգոյութիւնը կ'ազդէ անոնք, որոնք կը գուրգուրան անոր վրայ. իսկ գոյութիւնը աղիւս մը կ'աւելցնէ գրականութեան որմին, կը նորոգէ գայն, «բնակելի» կ'ընծայէ, ինչպէս նորոգուած հին ամրոց մը: Նոր ծածօք, պատուհաններ, բացուող եւ գոցուող դռներ, ելումուտ, երբեմն «դաժան եւ շլիտի հով»... բայց բոլոր պարագաներուն ալ՝ շարժում:

Գրողին դերը այդ շարժումը ստեղծելն է, իսկ տեղը՝ յարատեւ փոփոխութեան մէջ:

Ի՞նչ կարելի է ըսել արդի ժամանակակից գրողին տեղին եւ դերին մասին մեր, Սփիւռքի գաղութներուն մէջ:

Բանավեճի նիւթ հաւանաբար ...

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Նալպաստեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարագատին՝


ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2024-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածանի եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրացի շրջափակին սրահը:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Աւետեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարագատին՝


ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՍԱՐԳԻՍ ԱԻԵՏԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2024-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Բառանից Մանկանց Մայր եկեղեցոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Աղբալեան» սրահը:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Գասապեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարագատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԲԱՐԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2024-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածանի եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահը:



ԷԹԻՄԵՉԵԱՆՆԵՐԸ (ՎԱՉՉԳԷՆ ՈՒ ԳԵՂԱՆԻ)



Լեոն Գառնյան

Երկու նուիրեալ դեմքեր, գիր-գրականութեան եւ Մեսրոպեան անուանի լիբանանահայ երկու սպասարկուներ, որոնց մասին պիտի խօսինք անցեալ ժամանակով, քանի որ երկուքն ալ հեռացած են այս աշխարհէն: Վազգէնը՝ 1996-ի Սեպտեմբերին, Պէյրութ, իսկ քոյրը՝ Գեղանին, 2022-ի Զոհեմբերին, Երեւան:

Ես օրդ. Գեղանին ճանչցայ շա՛տ ուշ, քանի մը տարի առաջ, Պիքֆայայի Դպրեվանք (ուր կը պաշտօնավարէր այն ատեն) տրուած կարճ այցելութեան մը ընթացքին, անցողակիօրէն, իսկ Վազգէնը չեմ ճանչցած բնաւ:

Եթիմեզեաններուն արմատը Զալեպէն էր, բայց իրենց ազգային ծառայութեան դաշտը տեւաբար հանդիսացաւ Լիբանանը, ուր, հրկիզուող մայրիներու բոցերուն մէջ անգամ Եթիմեզեանները մնացին պատնէշի վրայ...:

Յիմա, երբ անոնք չկան, ուրախալի է տեսնել, թէ մեր սեղանին վրայ դրուած են երկու նորատիպ գիրքեր, որոնք կը միտին փրկել յիշատակն ու գիրը քոյր-եղբայր Եթիմեզեաններուն, անջատաբար:

Ես կը հաւատամ տպագիր խօսքի տոկոսութեան, նոյնիսկ՝ յաւերժութեան: Մարդ անհատին Ֆիզիքական անեացումէն ետք ի՞նչ կը մնայ իրմէ...: Ոմանք կ'ըսեն՝ «բարի անուն մը», «քաղցր յիշատակ մը»: Աննիւթական հասկացութիւնները, սակայն, կրնան դիմադրել դարերու մաշեցնող, հարթող գլխին՝ եթէ գրաւոր-տպագիր անուան մը կայ մէջտեղը: Այլապէս, ո՛չ մէկ յիշատակ կամ անուն կրնայ տոկալ մէկ-երկու սերունդէ անդին...:

Եթիմեզեաններու գիրն ու յիշատակը փրկուած է ուրեմն: Կրնանք «խօսիլ» իրենց հետ, «լսել» գիրքէն՝ իրենց տպագիր գործերուն ճամբով:

Եկե՛ք թակենք անոնց դուռը գատ-գատ:

Ա) «ՍՏՈՒԵՐՆԵՐ» (Գեղանի Եթիմեզեանի)

Իմացայ, թէ այս փոքրածաւալ գիրքը ունեցած է երկու անջատ տպագրութիւն. մին՝ Երեւան, հեղինակուհին մահէն տարի մը առաջ, միւսը՝ Պէյրութ, 2022-ին (տպ. Չաւեն եւ որդիք):

Ընտանեկան յիշատակարան մըն է այս:

Գեղանին (ծն. 1944) ունեցեր է երեք եղբայր եւ երկու քոյր: Բոլորն ալ այս աշխարհէն մեկներ են իրմէ առաջ...: Գիրքին մէջ կը խօսի անոնց մասին, կը բնութագրէ զանոնք մէկ առ մէկ, սեղմ, ստուերային պատկերագծումներով: Կարծեք ընտանեկան ալալիմ մը կը բանայ ու հոն տեղադրուած սեւ-ճերմակ լուսանկարները հերթով կը ցուցադրէ մեզի, այնտեղ արձանացած իւրաքանչիւր դեմքի մասին անպայման պատմելիք բան մը գըտնելով...:

Ամմոռանալի յուշեր ունի Զալեպէն, ուր անցած է իր մանկութիւնն ու պատանեկութիւնը: Շրջանաւարտ եղեր է Զարէն Եփփէ Ազգ. Ճեմարանէն, 1965-ին:


Օ՛, ինչե՛ր կը յիշէ Նոր Գիւղի փողոցներէն, տուններէն, մարդոց առօրեայ կենցաղէն: Զանրային բաղնիքներու մէջ առնուած լոգանքը, գորօրինակ, որքա՛ն տպաւորէր է մանուկի իր հոգին. «...Ճամբայ իյնալ մեծ ծրարներով: Գազուստ, կարպետ, օճառներ, ցամքոցներ եւ մանաւանդ նարինջ ու պակիր՝ անհրաժեշտ մանրամասնութիւններն էին:

Ճամեր կը տեւեր մեր լոգանքը: Բանի մը անգամ կը լոգցնէին մեզ, որովհետեւ բաղնիքին խոնաւ, ջրաշոգիով յագեցած կիսամութ անցքերուն մէջ, կաւի, օճառի ջուրերու հոսքին մէջ իյնալով՝ քանի մը անգամ լուացուելու կարիքը կը ստեղծէինք: Տոնակատարութիւնը կ'ամբողջանար

բաղնիքի մուտքի "սետիր"-ներուն վրայ, հագուստները հազնելէ ետք, նարինջի ու պակիր-հացի հիւրասիրութեամբ...»:

Նոյնքան երանաւետ զգացումներով կը յիշէ իր մօրեղբօր բակով տունը, «անցանկապատ, լեռան գլուխը, քանի մը սենեակներով», շուրջը՝ խընձորենիներ, վարդի թուփեր, ռեհան ու մեղրածաղիկ...: Իսկ այդ տան տանիքը քննալու փորձառութիւնը՝ ամռան արձակուրդի գիշերներուն, աստեղագարդ բաց երկնքին տակ, տարեկից փոքրահասակ երկու գարմիկներուն հետ կողբկողքի, երջանկութենէն անելի՛ բան մը եղած է իրեն համար: «Աստղերն ու մօտակայ ծառերուն բոյրը հեքիաթային մթնոլորտ մը կը ստեղծէին, ու ես՝ հեքիաթասացս, երբեմն չէի անդրադառնար որ արդէն մշիկ-մշիկ քունի են անցած մօրեղբօրս աղջիկները...»:

Նախակրթարանի տարիներէն ան կը յիշէ կարգ մը ուսուցիչ-ուսուցչուհիներ: Առաջինը՝ օրդ. Սիրանոյշը, «որ մարմնացումն էր այդ օրերու մանկավարժական արմատացած սկզբունքներուն: Մէկ թելը մնայուն անշարժ էր, իսկ մատները՝ միշտ ձեռնոցի մը մէջ պահպանուած: Միւս ձեռքը ամբարած էր արտակարգ ուժականութիւն մը: Կը դասաւանդէր աշխարհագրութիւն» (հեղինակուհին թելու մակնուն չի տար, բայց ակընյայտ է որ խօսքը կը վերաբերի Զալեպի Կրթասիրաց աղջկանց վարժարանի երբեմնի ուսուցչուհի օրդ. Սիրանոյշ Էլէճեանին): Նոյն դպրոցէն կը մտաբերէ Պետրոս Խոճան (=Տէր Պետրոսեան), երգի ուսուցիչը, «հաստ ապակիներով իր ակնոցով ու մանաւանդ՝ իր կաղ ոտքով»:



Յետոյ կը յիշէ Արմեն Անոյշը, որ Զայկազեան վարժարանի տնօրէնն էր ու նաեւ՝ հայոց պատմութեան ուսուցիչ եւ իր անուանած դասանիւթի դասագրքին հեղինակը: Կարճահասակ անձ մը՝ մեծ գլխարկով: «Տնօրէնի հանգամանքը, պատմելու՛ ոճը, թէ՛ դասագիրքին հեղինակ ըլլալը՝ ակնածանքի պարտաւորեցնող զգացողութիւնը կ'արթնցնէին ու շրթներէն կախուած՝ բառը բառին կը հետեւէի: Առիթով մը, երբ իրմէ ետք դասը պատմելու հերթը ինձի հասաւ, նոյն ոգեւորութեամբ յաջողեցայ ներկայացնել պատմութիւնը:

Իր թելադրանքով՝ ընկերներս ծափահարեցին, ու դարձայ իր աստղը»: Իսկ ճեմարանի տարիներէն կը յիշէ հայերէնաւանդ երկարամեայ ուսուցիչ Մկրտիչ Մկրտիչեանը, որ «մեր շարադրութեան իւրաքանչիւր բառը կը մաղէր ու իր սուր քննադատութեամբ կը ձեւաւորէր մեզ՝ բառերը ընդունելու իբրեւ գանձ եւ աշխարհ»: Կը պատմէ որ անգամ մը իր շարադրական պարտականութեան մէջ մէկու մը հասցէին գործածեր էր «որ՝ ձեւեղ» բառը եւ ասով՝ պատճառ դարձեր էր որ



photo by Ashnag@

պր. Մկրտիչեան գայթակղի: «Այս բառը քու գլուխէդ վեր է», -յանդիմաներ էր զինք ուսուցիչը...:

Գեղանիին կեանքը հոն եւ ճակատագիր կը փոխէ 1965-ին, երբ ան Զալեպէն կը փոխադրուի Պէյրութ, բարձրագոյն ուսման նպատակով: Զոս, Նոյն տարին, «Ժամանակակաւոր» կերպով ուսուցչական պաշտօնի կը կոչուի Ազգ. Նուպարեան վարժարանէն ներս: Ու երեւակայե՛լ, որ այդ «Ժամանակակաւոր» պաշտօնը պիտի երկարէր ամբողջ կեանքի մը վրայ՝ լման 55 տարի...: Արդարեւ, 24 տարի Նուպարեանի մէջ գործելէ ետք (13 տարին՝ իբրեւ տնօրէնուհի), 1989-էն սկսեալ ալ՝ լման քառորդ դար կը վարէ տնօրէնութիւնը Ազգ. Արգարեան երկրորդ վարժարանին:

Արդի՛նքը: Օր մըն ալ առաջնորդարան կը կանչուի «Կիսկանկատութեան ամբողջական բացակայութեամբ եւ առանց նախաբանի» իրեն կը հաղորդուի, թէ «յառաջիկայ տարի պիտի դադարիք աշխատանքէ...»: Իջած էր վարագոյրը...:

Իր կէս դարու կրթանուէր կեանքէ՛ն ալ դրուագներ պատմած է Գեղանին: Չորօրինակ, յիշած է հայոց պատմութեան ուսուցիչ պր. Արտաշէսը (=Տէր Գեորգեան), որ «թիրո թաղին մէկ անկիւնը գետնայարկի մը մէջ կ'ապրէր: ... Գիրքերով ծանրաբեռնուած սենեակ-տունը մահճակալի մը տեղը հազիւ ունէր: Խոնաւութիւնը, առողջապահական պայմաններու բացակայութիւնը ինչպէ՞ս կը բաւարարէին իր շնչելու պահանջը, կը հարցնէի ինքզինքիս, երբ կ'այցելէի իրեն»:

Զապա՞ Նուպարեան վարժարանի երկարամեայ մանկապարտիգ պանուհի օրդ. Ծաղիկը: Ա՛հ, որքա՛ն ինայասէր եղեր էր ան: «Ձեռային աշխատանքներու ամենամանր մնացորդները բծախնդրութեամբ կը պահէր: Ազգին դրամն էր: Պէտք չէր վատնել»: Անո՛ր ալ մայրամուտը տխուր պիտի ըլլար: Ծանօթեցրը զինք տեղադրէր էին ծերանոց, կիսախելագար պառաւաններու դրացնութեամբ...: «Տո՛ւնս տարէք զիս», -խընդրէր էր հէք ուսուցչուհին իր շուրջիններէն տեւաբար: Ու օր մըն ալ՝ «մահացաւ լուռ ու մուսն է անտէր-անտիրական թաղուեցաւ...»:

(շար. 1)

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

Խոյ
Ձեր կարեւոր գործերը մի՛ յետաձգեք: Նկատելի յառաջընթաց պիտի արձանագրեք՝ երկար սպասումէ ետք:
- 

Ցուլ
Մեծ յաղթանակներու համար պետք է պայքարիք: Լաւ ընկերներու աջակցութիւնը պիտի վայելէ՛ք:
- 

Երկուորեակ
Լարուած վիճակ մը ունիք: Նիւթական մխուժման մի՛ կատարեք այս շաբաթ: Ընկերներէ խորհուրդ պահանջեցէ՛ք:
- 

Խեցգետին
Ձեր աշխատասեր եւ յամառ կեցուածքով բարձրունքներ պիտի նուաճեք ու գնահատանքի արժանանաք այս շաբաթ:
- 

Առիծ
Մեծ կարողութիւններ ունիք բարդ խնդիրները լուծելու: Անցեալի իրադարձութիւնները քննարկեցէ՛ք այս շաբաթ, որպէսզի վերլուծումներ կատարեք:
- 

Կոյս
Ձեր բոլոր ծրագիրները պիտի իրականացնէք վերջապէս: Հաճելի պտոյտ մը նախաձեռնած էք՝ բնութեան գիրկին մէջ:
- 

Կշիռք
Շաբաթը բաւական լարուած է: Խոչընդոտներ պիտի ունենաք, սակայն դիւրութեամբ պիտի յաղթահարեք զանոնք:
- 

Կարիճ
Անհրաժեշտ է հաւատալ ձեր սեփական ուժերուն: Շատ բարդ հարցեր հեզասահ կերպով պիտի լուծուին:
- 

Աղեղնաւոր
Անհրաժեշտ պահերուն միշտ ալ բարեկամներուն աջակցութիւնը պիտի վայելէ: Ձեր արտաքին տեսքին ալ կարեւորութիւն տուէ՛ք:
- 

Այծեղջիւր
Ձեր ձիրքերը պիտի ցուցաբերեք այս շաբաթ: Աշխատանքային խընդիրները պիտի լուծուին եւ ձեր գործերը կարգի ու կանոնի պիտի մըտնեն:
- 

Ջրիս
Սուր տարածայնութիւններ եւ վեճեր պիտի դիմագրաւեք այս շաբաթ: Անձանօթ մարդիկ նոր յարաբերութիւններ պիտի մշակեն ձեզի հետ:
- 

Ձուկ
Անհրաժեշտ է լրջութեամբ մտածել եւ կարեւոր որոշումներ կայացնել այս շաբաթ: Պիտի հանդիպիք մարդոց, որոնք օգտակար պիտի հանդիսանան ձեզի:

ԽՄՃԱՆԿԱՐ

ՎՈՌՁԱՊՈՒՅՎԱԿ

ՈՒԹ ԽՈՐՀՈՒՐԴ ՁԵՐ ԱԶՔԵՐՆ ՈՒ ՈՂՆԱԾԱՐԸ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻՆ ՎՆԱՄՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Համակարգիչին դիմաց երկար ժամերով նըստած աշխատիլը բնականաբար կը յոգնեցնէ թէ՛ ձեր աչքերը, թէ՛ ուղեղը, եւ թէ՛ ողնաշարը: Այս իսկ պատճառով անհրաժեշտ է կանխել առողջական բարդոյթները՝ հետեւելով ստորեւ յիշուած ուրիշ խորհուրդներուն:



Ա) Համակարգիչին դիմաց նստելու ճշգրիտ դիրք ընտրեցէ՛ք: Հարկ է 50 սմ. հեռաւորութիւն պահել համակարգիչի պաստառին եւ ձեր աչքերուն միջեւ: Պաստառը ձեր ուղիղ նայուածքէն 15-20 սմ. անկիւնով թեքեցէ՛ք դէպի առջեւ:

Բ) Պաշտպանեցէ՛ք ձեր աչքերը: Նախընտրելի է պաստառի լոյսին գօրութիւնը մեղմացնել կամ յաւելնել ծածկոյթ մը անելու անոր՝ պաշտպանելու համար աչքերը անոր արձակած ճառագայթներէն:

Գ) Ի գործ դրէ՛ք 20-20-20 միջոցը: 20 վայրկեանը անգամ մը ձեր նայուածքը այլ տեղ ուղղեցէ՛ք՝ հեռացնելով համակարգիչի պաստառէն 20 սմ. անդին՝ 20 երկվայրկեանուան տեսողութեամբ:

Դ) Հանգչեցուցէ՛ք ձեր աչքերը: Հարկ է երկու ժամը անգամ մը աչքերը հանգչեցնել 15 վայրկեանուան տեսողութեամբ:

Ե) Աչքերը թարթեցէ՛ք: Անհրաժեշտ է աչքերը մերթ ընդ մերթ թարթել՝ խոնարհելու համար աչքին մակերեսը:

Զ) Համակարգիչին ընծեռած տուեալներէն օգտուեցէ՛ք: Գրութեան տողերուն հեռաւորութիւնը անելուցէ՛ք, տառերուն չափը մեծցուցէ՛ք, պաստառին լուսաւորումը համապատասխան դարձուցէ՛ք ձեր աշխատած վայրին լուսաւորութեան, գոյներու խտութիւնը մեղմացուցէ՛ք եւ այլն:



Է) ճշգրիտ դիրքով նստեցէ՛ք համակարգիչին դիմաց, ձեր կրնակը ուղիղ պահելով եւ կրթնեցնելով աթոռին:

Ը) Իւրաքանչիւր կէս ժամը անգամ մը ոտքի կանգնեցէ՛ք եւ աշխատանքի սենեակին մէջ քահ մը երկվայրկեան քալեցէ՛ք:

ՕՐԱԿԱՆ 15 ՎԱՅՐԿԵԱՆ ՔԱԼԵԼԸ ՕԳՏԱԿԱՐ Է

Քալելը, նոյնիսկ օրական գէթ 15 վայրկեան, դրական անդրադարձ կ'ունենայ մարդու առողջութեան վրայ ընդհանրապէս, որովհետեւ.

- Ա) Կը բարձրացնէ տրամադրութիւնը, յատկապէս բնութեան մէջ քալելու պարագային,
- Բ) Կը խթանէ ստեղծագործելու ձեր ունակութիւնը,
- Գ) Կ'երկարեւ ձեր կեանքը ու առողջ կը պահէ ձեզ,
- Դ) Կը կարգաւորէ քունը,
- Ե) Կը կարգաւորէ ձեր ջղային համակարգը,
- Զ) Կը հանդարտեցնէ միտքը եւ կը ցրուէ ճընշուածութիւնը,



- Է) Կը մեղմացնէ ցաւերը,
- Ը) Կը գօրացնէ ուկրները,
- Թ) Առողջ կը պահէ ձեր տեսողական համակարգը,
- Ճ) Ձեզ կը պարգաւէ հաճելի ժամանակ ձեր բարեկամներուն եւ սիրելիներուն հետ:
- ԺԱ) Ձեզ կը պաշտպանէ ամեն տեսակ հիւանդութիւններէ:

Բանաստեղծական Անկիւն

ԱՄԵՆԱԾԱՆՕԹԸ

Փանոս Ծերանեան



Իմ սիրածին ծաղկանց մէջէն ամենածանօթը ինծի՝ կարմիր վարդն է իր փուշով. ու ծաղիկը՝ ապրիմ-մեռնիմ իր թաւալող տերեւով...

Մարզական



Ռաֆֆի Սիկատեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Հինգշաբթի, 28 Մարտ 2024-ին, մայրաքաղաք Դամասկոսի մէջ, ՀՄԸՄ-ի Հալէպի Մասնաճիւղի պասքեթի տղոց խումբը Սուրիոյ պասքեթի ախոյեանութեան Ա. դասակարգ բարձրացաւ: Մրցումը ավարտեցաւ 70 -67 արդիւնքով՝ ի նպաստ հիւրընկալ Մաուրային, բայց ՀՄԸՄ օգտուելով երթի մրցումին 6 կէտերու տարբերութեամբ արձանագրած յաղթանակէն յաջողեցաւ բարձրանալ Ա. դասակարգ եւ իր տեղը գրաւել Սուրիոյ լաւագոյն խումբերուն մէջ:

-Սուրիոյ պասքեթի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն, ՀՄԸՄ-ի խումբը 76 - 64 արդիւնքով պարտութեան մատնեց Դամասկոսի ալ-Աշրաֆիէ խումբը: Այս արդիւնքով, ՀՄԸՄ -ի աղջկանց խումբը մնաց Ա. դասակարգի մէջ՝ գրաւելով աղիւսակի 8-րդ դիրքը:

-Շաբաթ օր, Հալէպի ալ-Համատանիէ մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Սուրիոյ հանրապետութեան բաժակի տղոց մրցաշարքի ավարտական մրցումը, ուր Հալէպի Ահլին 80 - 63 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել Դամասկոսէն ժամանած Ուախտէն: Մրցումի ընթացքին, Ահլին յաջողեցաւ տիրապետել արդիւնքին եւ ավարտին ձեռք ձգել իր պատմութեան ընթացքին 11-րդ հանրապետական բաժակը:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՄԻԱ 2018-ԷՆ Ի ՎԵՐ ԱՐԱՋԻՆ ԱՆԳԱՍ ԸԼԼԱՆՈՎ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆՈՒԹՅԱՒ ՏՈՐՅՈՒՆՏԷՆ

Գերմանիոյ Պունտսլիքայի 27-րդ փուլի խաղին, Պայերն Միունխերը իր սեփական դաշտին վրայ ընդունեց Պորիսիա Տորթմոնտը եւ կրեց պարտութիւն մը 2 - 0 արդիւնքով: Այսպիսով, Պորուսիա 2018-ԷՆ Ի ՎԵՐ առաջին անգամ կը յաջողէր պարտութեան մատնել Պայերն Միունխերը: Մինչեւ այս հանդիպումը, Պունտսլիքայի իր վերջին յաղթանակը տարած էր 10 Նոյեմբեր 2018-ին, 3 - 2 արդիւնքով: Աւելցնենք, որ այս տարեշրջանին, Պայերն Միունխերը կը գրաւէ աղիւսակի երկրորդ դիրքը: Խումբը 27 հանդիպումներուն ապահոված է 60 կէտ, իսկ Պորիսիան 53 կէտով կը գրաւէ 4-րդ դիրքը:



Գերմանիոյ Պունտսլիքայի 27-րդ փուլի խաղին, Պայերն Միունխերը իր սեփական դաշտին վրայ ընդունեց Պորիսիա Տորթմոնտը եւ կրեց պարտութիւն մը 2 - 0 արդիւնքով: Այսպիսով, Պորուսիա 2018-ԷՆ Ի ՎԵՐ առաջին անգամ կը յաջողէր պարտութեան մատնել Պայերն Միունխերը: Մինչեւ այս հանդիպումը, Պունտսլիքայի իր վերջին յաղթանակը տարած էր 10 Նոյեմբեր 2018-ին, 3 - 2 արդիւնքով: Աւելցնենք, որ այս տարեշրջանին, Պայերն Միունխերը կը գրաւէ աղիւսակի երկրորդ դիրքը: Խումբը 27 հանդիպումներուն ապահոված է 60 կէտ, իսկ Պորիսիան 53 կէտով կը գրաւէ 4-րդ դիրքը:

TRANSFERMARKET-Ը ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԷ ՖՈՒԹԳՈՒԼԻՍՏՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Վերջերս Transfermarket-ի մասնագետները վերամշակած են եւրոպական կարգ մը առաջնութիւններու ֆութպոլիստներու փոխադրութեան արժեքներուն տուեալները, նկատի առնելով բարձրագոյն հինգ լիկաները: Այսպիսով՝ մոլորակի ամենաթանկարժեք ֆութպոլիստները շարունակեցին մնալ Մանչեսթըր Սիթիի յարձակող Էրլինկ Հալանտը, ՓՄՃ-ի ներկայացուցիչ Զիլիան Մպպիէն՝ Ռեալի ֆութպոլիստ Ճուստ Դելիլի-համը: Անոնց փոխադրութեան արժեքը հասած է 180 միլիոն եւրոյի:



Լաւագոյն քառեակը կ'եզրափակէ դարձեալ Ռեալի ներկայացուցիչ՝ Վիսիուս Ժուսիքը, որուն փոխադրութեան արժեքն է 150 միլիոն եւրո:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 482)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■				■		■			■	
3	■		■									
4				■				■		■		
5									■			
6			■			■				■		
7							■					
8		■					■		■		■	
9				■		■						
10										■		
11	■								■			
12			■		■							

Հորիզոնական

- «Նորավեպի Իշխան» կոչուած հայ գրող:
- Հիմա: Կրկնուած ձայնաւորներ:
- Եական բայ: Ուռնացած:
- Որոշուած գին: Խոռոչ:
- Թագ կրող: Չար ոգի:
- Երկբարբառ: Աղբիւր: Միշտ: Տարածքի միւտոր:
- Թարթափ: Որսալու հիւտուածք:
- Սրբուհի մը:
- Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: «Պարտեզում Վարդեր Բացուած» երգին հեղինակ գուսանը:
- Արցախի ազատամարտիկ Վարդան Ստեփանեանի ծածկանունը: 7001:
- Պարան: Հանքային համեմ:
- Բաժին: Աշխատութեան մը նախանիւթերը:


Ուղղահայեաց

- Կոնաբեր ծառի տեսակ՝ կարմիր հատիկներով: Բուժուիլ:
- Բարձրութիւն: Տառի մը անունը:
- Երկբարբառ: Հակառակ՝ աչք: «Պայքար» վեպին հեղինակը:
- Շարադրէ՛: Ստնտու:
- Արկածալից ուղեւորութիւն: Հակառակ՝ հաստ ձայն:
- Շաղկապ: Հակառակ՝ Պատարագի ընթացքին սրբագործուած հաց:
- Ցասում:
- Հակառակ՝ տարածքի միւտոր: Նշանաւոր որկրամուր:
- Տափարակ: Իրերայաջորդ տառեր: Եական բայ:
- Հակառակ՝ հարիւր տարի: Տղամարդ:
- Հայկական մականուններու վերջավանկը: Ափսո՛ս:
- Սանձ: Դառնութիւն, սրտմտութիւն:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 481)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	կ	ի	բ	ա	կ	ի	ա	ա	ա	ճ		
2	ա	ա	բ				ն	ա	խ	ի	բ	
3	ն	ա	բ	դ	ն	ս	ն	է	տ	ա		
4	կ	բ	ա		տ			ա	յ	զ		
5	ա	տ		ն	բ	ն	ս	ա	բ			
6	ն	ա	ի	վ	ի	բ	ա	յ	ա	յ	լ	
7							ա	ա	ն	ն		
8		շ	ա	բ	ա	կ	ա	ն		ի	յ	
9	ա	կ	ա	ի	դ	զ		ի	ա	ց		
10	կ	է	ն	զ			ա	բ				
11	ա	տ	ա	փ	ա	բ	ա	կ		ն	ն	
12	ն	ս	ա	ն		ի	ն	ի	ն	ւ	բ	

ԼՈՒՐԵՐ



ՄԵՐ ՏԻՐՈՋ ԵՒ ՓՐԿՉԻՆ...

ՎՍԿԻՐ Էջ 1

պատգամը ուղղեց ժողովուրդին ըսելով. «Այսօր ողջ քրիստոնեայ աշխարհը, մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին, իր հաւատաւոր զաւակներով, հոգեկան ուրախութեան եւ ցնծութեան մէջ է, որովհետեւ կը տօնէ իր կրօնը մարմնաւորող, արժեւորող եւ իմաստաւորող ամենակարեւոր երկու սիւներէն մէկուն՝ Զրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան տօնը, որ կու գայ իսկապէս մարդուն հոգի, յոյս եւ քաջութիւն ներշնչելու եւ

րագին: Սրբազան Հայրը հաստատեց, թէ հրեշտակին յայտարարած մէկ եւ միակ բացարձակ ճշմարտութիւնը Զրիստոսի Յարութիւնն է, մենշնչեմը յարութիւնը եւ Զրիստոսի յաղթանակը:

Սրբազան Հայրը հետեւեալ քանի մը կէտերով անդրադարձաւ հրեշտակին տուած պատգամին:

- Հրեշտակը յայտարարեց յաղթանակի անտիսը, որ այսօր մեր ներաշխարհին մէջ կենդանութեան վերածուած, ուժականութեամբ զսպանակուած մեզ կ'առաջնորդէ մեր դժուարին պայմաններուն մէջ:

- Մեծ երկրաշարժը, որ պատա-

կը զօրացնէ:

- Պետք է կենդանի փնտռել մեռածներուն մէջ: Զրիստոս եկաւ եւ իր յարութեամբ մահուան ստրկութենէն ազատեց մեզ, փարատեց մահուան խայթոցը, խորտակեց դժոխքի դռները եւ մարդկութիւնը ազատագրեց մահուան անէծքէն, որ դարեր շարունակ կը տիրէր:

- «Եկէ՛ք տեսէ՛ք, որ գերեզմանը պարապ է»: Այս հասկացողութեամբ կը հրաւիրուինք, որ մեր ներաշխարհին մէջ կենդանի վկան ըլլանք Զրիստոսի դատարկ գերեզմանին, որպէսզի անելիով արմատաւայ մեր քրիստոնեական հաւատքը եւ ժայռին վրայ հաստատուինք:

Ս. Յարութեան զօրութիւնը վերանորոգէ մեր մտքերն ու հոգիները, ուղղութեան մէջ դնէ մեր ապրելակերպը, առաջնորդէ մեր քայլերը, որպէսզի ուրախութեամբ եւ յոյսով շարունակենք ապրիլ եւ գոյատեւել:

Սրբազան հայրը Ազգ. Իշխանութեան քաղաքական եւ կրօնական ժողովներուն անունով շնորհաւորեց ժողովուրդի զաւակները՝ Ս. Յարութեան տօնին առիթով: Անջերմագին բարեմաղթութիւններ փոխանցեց Սուրբոյ Վսեմաշուք Նախագահ տոքթ. Պաշտօնաւար Կարմիր Սուրբապետին, անոր մարդկային առողջութիւն, բարորութիւն եւ արեւշատութիւն: Ան աղօթեց, որ Զրիստոսի Ս. Յար-



անոր ի ներքուստ զօրացուցած, առաւել եւս հաւատքի ժայռին վրայ հաստատած կ'առաջնորդէ, որպէսզի իր կեանքի պայքարը մղէ խաւարով լեցուած եւ անարդարութեամբ լեցուն այս աշխարհին մէջ»:

Սրբազան Հայրը ակնարկեց իւղաբեր կանանց պարտականութեան գիտակցութեան եւ սիրոյն, երբ վաղ առաւօտուն Զրիստոսի գերեզմանը այցելեցին իրենց պարտականութիւնը կատարելու եւ հրեշտակէն ստացան Զրիստոսի Յարութեան անտիսը: Հետեւաբար, ան գնահատեց եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուող մեծաթիւ հաւատացեալները, որոնք իւղաբեր կանանց նման, Զրիստոսի հանդէպ իրենց սերնէն եւ հաւատքէն մղուած, մասնակից դարձան Զրիստոսի Ս. Յարութեան տօնին նուիրուած Ս. Պատա-

հեցաւ երկինքէն հրեշտակին իշած պահուն, կը խորհրդանշէ բոլոր քրիստոնեայ հաւատացեալներուն տրուած նոր կեանքը: Աշխարհի մտահոգութիւններով ծանրաբեռնուած հին մարդը կը հրաւիրուի Զրիստոսի Յարութեան լոյսով լուսաւորուելով նոր կեանք ապրելու:

- Յարութեան առաջին պատգամը, որ մեր սրտերուն, հոգիներուն եւ մտքերուն մէջ կ'արձագանգէ «մի՛ վախնաք» աստուածատուր պատուէրն է, որովհետեւ մեր Տէրը Յարութիւն առաւ: Ան նշեց, թէ պատերազմը, տնտեսական ծանր տագնապը եւ դժուարութիւնները կու գան ճնշելու մեր ծննդավայր Սուրիան, սակայն Յարութեան տօնը կու գայ մեզ գօտեպնդելու, ըսելով, որ մի՛ վախնաք, յիշեցէ՛ք դատարկ գերեզմանը եւ Զրիստոս ձեզ անելիով

ժայռը Զրիստոսի Յարութեան, մարդեղութեան եւ խաչելութեան վարդապետութիւնն է: Զրիստոնեական կրօնը հաստատուած է երկու հիմնական սիւներու վրայ. -

Ա. Զրիստոս մեզի համար մեռաւ

Բ. Զրիստոս մեզի համար Յարութիւն առաւ մեռելներէ:

Սրբազան Հայրը յայտնեց, թէ հրեշտակը այս պատգամներէն ետք կը հրաւիրէ մեզ առաքելութեան եւ կոչումի, որն է որպէս քրիստոնեայ մեր պարտականութիւններուն հետ միասին հաւատքի վկայութիւն տանք եւ գիրար գօտեպնդելով մեր հաւատքին մէջ, մեր կեանքը ի սպաս դնենք Աստուծոյ, մեր հայրենիքին, եկեղեցւոյ եւ մեր ազգային, մշակութային եւ հոգեւոր արժեքներուն:

Սրբազան Հայրը աղօթեց, որ

րութեան զօրութեամբ, սուրիական հայրենիքին դէմ ծառայած մեղքի խաւարին կապանքները փշրուին: Ան մաղթեց, որ Տէրը զօրացնէ Հայաստանի եւ Սուրիոյ բանակները, սեր եւ խաղաղութիւն հաստատէ բոլորիս սրտերուն մէջ, որպէսզի եղբայրասիրութեամբ եւ աստուածապաշտութեամբ ապրինք, արդարութիւնը սիրելով եւ ճշմարտութիւնը փնտռելով:

Պատարագէն ետք, դպրաց դասը հոգեկան ցնծութեամբ երգեց «Այսօր յարեաւ ի մեռելոց» շարականը: Ապա, սրբազան հայրը ընդունեց ժողովուրդի զաւակներուն շնորհաւորութիւնները, որմէ ետք դպրաց դասի «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ, սրբազան հայրը թափօրով ուղղուեցաւ դէպի եկեղեցւոյ շրջափակ: